30 հուլիսի 2020 թվականի N 1284 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 419-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՖԱՐՄԱՏԵՔ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 419-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 60-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 61-63-րդ կետերով.

«

61.	9018905001	PVC, PP կոնտեյներներ իր փականներով	Արյան փոխարինիչների և ինֆուզիոն լուծույթների վերցման և փոխներարկման համար համակարգեր	հատ	3 456 000	Չինաստան	168 408 000
62.	2501009900	Նատրիումի քլորիդ	Դեղի հումք՝ նատրիումի քլորիդ (ոչ սննդային)	կգ	45 000	ԵՄ, Չինաստան	18 900 000
63.	2933539000	Միացություններ հետերոցիկլային՝ միայն ազոտի հետերաատոմ (ներ) պարունակող, միացություններ՝ կառուցվածքում քինոլինային կամ իզոքինոլինային օղակային համակարգեր (հիդրացված կամ չհիդրացված) պարունակող, այլ, Moxifloxacin HCL	Հումք	կգ	60	ԵՄ, Չինաստան, Հնդկաստան	16 500 000

».

2) «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «3 429 288 500» թիվը փոխարինել «3 663 096 500» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. օգոստոսի
Երևան